

այս ճանապարհէն կ'անցնէի, և ամէն անգամ անցնելուս կը համբուրէի նոյն քարը» (Ք. Ե. Ս. հատ. Է. Բ. մաս, էջ 323): Յիշատակուած քարը երկար ժամանակ ճանապարհին վրայ չէ թողուած, մինչև 1517 թուականը, քիչ ատեն մըն ալ մնացած է նոյն տեղը:

Նոյն տեղւոյն իբր ուխտատեղի գոյութիւնը կը հաստատուի նաեւ մեր ձեռքը գտնուած երկու ցուցակներէն, մին՝ Ակիւրմանցի Նիկողայոս եպս. ի, որ Փելլիքս Փապրիէն մէկ տարի առաջ (1483) ուխտի եկած է և նոյն տեղը հետեւեալ կերպով կը յիշատակէ. «Եւ երբ երթաս ի Յարոքեան դռն մի կարուած կայ ի վերայ ճանապարհին, ուր Տերն սասց ողջ էք, եւ նոքա մասուցեալ կարան գոսս նորս և այլն», միւսն է՝ հաւանաբար Սաչակրաց ժամանակ լատիններէնէ թարգմանուած ցուցակ մը, Մարկոս գրչին ընդօրինակութեամբ և անթուական՝ որ կը գտնուի մեր մատենադարանին (Թ. 1130) մէկ ձեռագրին մէջ՝ և կը բովանդակէ հետեւեալ խօսքերը. «Եւ ի սուրբ Սիոնի ճանապարհին եւ տեղի մի որ Քրիստոս երեւեցաւ երեք Մարիամանցն»:

5. Ս. Թովմայի եկեղեցին եւ արոյրէ երկու պնակները. — Ս. Յակոբի վանքին հիւսիսային կողմը ճանապարհին վրայ, փոքրիկ դուռ մը կը տեսնուի. անկէ կ'երևի հնաշէն փոքրիկ եկեղեցի մը Ս. Թովմա առաքելոյն անունով: Մարինոսի, ինչպէս նաև ուրիշ լատին պատմագիրներու նայելով՝ այս տեղը բնակութիւնը եղած է նոյն առաքեալին. իսկ Յովհաննէս եպիսկոպոս Երուսաղէմացին կը գրէ. «Մեք հաւաստիս այսպիս շուք թէ Տերն մեր Յիսուս Քրիստոս սաս վաճառեաց զՍուրբն Թովմաս Արքանեսայ վաճառականի հրեղկացոյ, որպիս գրէ Յայնաւորքն» (Օգոստ. 25): Այս